ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀՀ ՍԱՀՄԱՆԸ ՀԱՏՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Անհրաժեշտ տեղեկություններ Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքների հայտարարագրման մասին

2024

Ուղեցույցի նպատակն է՝ տրամադրել տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխվող ապրանքների հայտարարագրման վերաբերյալ

ԻՐԱԶԵԿ ԼԻՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԺԱՄԱՆԵԼԻՍ

Ուշադրություն

Հայաստանի Հանրապետության սահմանով ֆիզիկական անձանց կողմից ապրանքների տեղափոխմանը վերաբերող կարգավորումներին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ այցելելով ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքէջ՝
https://src.am/am/getMenusContents/266:

Հնարավոր է անցում կատարել նաև հետևյալ QR կոդով՝

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

1. Ինչ անել եթե իմ կողմից ուղեկցվող և (կամ) չուղեկցվող ուղեբեռով ՀՀ սահմանով տեղափոխվող ապրանքները ենթակա են հայտարարագրման, կամ ես չգիտեմ կարող եմ արդյոք առանց հայտարարագրելու տեղափոխել իմ ուղեկցվող (կամ) չուղեկցվող ուղեբեռում գտնվող ապրանքները.

Եթե Դուք ունեք հայտարարագրման ենթակա ապրանքներ, կամ վստահ չեք, որ Ձեզ մոտ առկա ապրանքները ենթակա չեն հայտարարագրման, ապա ընտրեք *կարմիր ուղին* և լրացրեք ուղևորային մաքսային հայտարարագիր:

Ուշադրություն

Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխման վայրերում տեղակայված անմաքս առևտրի խանութներից՝ Հայաստանի Հանրապետություն ժամանած ֆիզիկական անձանց կողմից ձեռք բերված ապրանքները դիտարկվում են որպես ֆիզիկական անձի՝ կողմից ուղեկցվող ուղեբեռով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքներ:

2. Ինչպես պետք է իրականացնել անձնական օգտագործման ապրանքների հայտարարագրումը.

Անձնական օգտագործման ապրանքների հայտարարագրումն իրականացվում է ուղևորային մաքսային հայտարարագիր լրացնելու և այն մաքսային մարմնին ներկայացնելու ճանապարհով:

3. Հայաստանի Հանրապետությունում ինչ լեզվով կարող եմ լրացնել ուղևորային մաքսային հայտարարագիրը.

Ուղևորային մաքսային հայտարարագիրը կարող եք լրացնել հայերենով, ռուսերենով կամ անգլերենով, իսկ մաքսային մարմնի թույլտվությամբ՝ այլ օտար լեզվով, որին տիրապետում են այն մաքսային մարմնի պաշտոնատար անձինք, ուր պետք է ներկայացվի այդ մաքսային հայտարարագիրը:

Ուշադրություն

✓ **Ուղևորային հայտարարագրի բլանկերի ձևերը (տարբեր լեզուներով) տեղադրված են հղումով**

https://www.src.am/am/getMenusContents/266

Հնարավոր է անցում կատարել նաև հետևյալ QR կոդով՝

Ցանկության դեպքում կարող եք տպել բլանկը, լրացնել և ստորագրել այն, և սահմանը հատելիս արդեն լրացված ուղևորային հայտարարագիրը ներկայացնել մաքսային մարմնին:

4. Որ ապրանքներն են ենթակա պարտադիր հայտարարագրման.

Պարտադիր հայտարարագրման ենթակա են.

1) չուղեկցվող ուղեբեռում Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքները կամ փոխադրողի կողմից առաքվող անձնական օգտագործման ապրանքները,

2) ցանկացած եղանակով Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխվող անձնական օգտագործման այն ապրանքները, որոնց հետ կապված, պահպանվում են արգելքներն ու սահմանափակումները՝ ԵԱՏՄ մաքսային օրենսգրքին (այսուհետ՝ Օրենսգիրք) համապատասխան և պահանջվում է ներկայացնել այդ արգելքների և սահմանափակումների պահպանումը հաստատող փաստաթղթեր և (կամ) տեղեկությունները,

3) անձնական օգտագործման ապրանքները, որոնց հետ կապված մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման,

4) անձնական օգտագործման այն ապրանքները, որոնք ներմուծվում են ուղեկցվող ուղեբեռում՝ մաքսատուրքերի հարկերի վճարումից ազատումով,

5) ցանկացած եղանակով ՀՀ սահմանով տեղափոխվող անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները՝ բացառությամբ անդամ պետություններում գրանցված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների,

6) Հայաստանի Հանրապետությունում գտնվող՝ ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները՝ դրանց վերաարտահանման, ազատ շրջանառության նպատակով բացթողման, օրենսդրությանը համապատասխան՝ դրանց այլ անձի փոխանցման դեպքերում,

7) կանխիկ դրամական միջոցները և (կամ) ճանապարհային չեկերը, եթե Հայաստանի Հանրապետության տարածք միանվագ ներմուծման կամ Հայաստանի Հանրապետության տարածքից միանվագ արտահանման ժամանակ այդ կանխիկ դրամական միջոցների և (կամ) ճանապարհային չեկերի ընդհանուր գումարը գերազանցում է ուղևորային մաքսային հայտարարագիրը մաքսային մարմին ներկայացնելու օրվա դրությամբ գործող փոխարժեքով 10 հազար ԱՄՆ դոլարին համարժեք գումարը,

8) դրամական գործիքները՝ բացառությամբ ճանապարհային չեկերի,

9) մշակութային արժեքները, որոնց մասով պահպանման են ենթակա օրենսդրությամբ նախատեսված արգելքները և սահմանափակումները,

10) միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող անձնական օգտագործման ապրանքները,

11) Ժամանակավորապես արտահանված տրանսպորտային միջոցների փոխարինված մասերը Օրենսգրքի 265-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում:

12) ՀՀ սահմանով մահացածների մարմիններով (մասունքներով) դագաղների և աճյունով (մոխրով) աճյունասափորների տեղափոխումը, որոնց տեղափոխման դեպքում որպես ուղևորային մաքսային հայտարարագիր կարող է օգտագործվել մահացած անձի մարմնով (մասունքներով) դագաղը կամ աճյունով (մոխրով) աճյունասափորն ուղեկցվող անձի կողմից ազատ ձևով շարադրված դիմումը):

5. Եթե Հայաստանի Հանրապետության տարածքով օդային տրանսպորտով տեղափոխվելիս Հայաստանի Հանրապետության տարածք ժամանելուց հետո, առանց միջազգային օդանավակայանի տարանցիկ գոտուց դուրս գալու, հեռանում եմ Հայաստանի Հանրապետության տարածքից, ապա ուղեկցվող ուղեբեռում տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքները ենթակա են արդյո՞ք հայտարարագրման.

Եթե Հայաստանի Հանրապետության տարածքով օդային տրանսպորտով տեղափոխվելիս Հայաստանի Հանրապետության տարածք ժամանելուց հետո, առանց միջազգային օդանավակայանի տարանցիկ գոտուց դուրս գալու, հեռանում եք Հայաստանի Հանրապետության տարածքից, ապա Ձեր ուղեկցվող ուղեբեռում տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքները ենթակա չեն հայտարարագրման:

6. Արդյո՞ք Հայաստանի Հանրապետություն ժամանելիս ես բոլոր դեպքերում պետք է հայտարարագրեմ ուղեկցվող ուղեբեռով տեղափոխվող, և օրենդրությամբ նախատեսված՝ առանց մաքսատուրքերի և հարկերի վճարման թույլատրելի չափաքանակները չգերազանցող անձնական օգտագործման ապրանքները.

Եթե Ձեր ուղեկցվող ուղեբեռում գտնվող անձնական օգտագործման ապրանքները չեն գերազանցում առանց մաքսատուրքերի և հարկերի վճարման ՀՀ սահմանով տեղափոխման թույլատրելի չափաքանակները, և այդ ապրանքների մասով չի պահանջվում արգելքների և սահմանափակումների պահպանում՝ Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան, և (կամ) Ձեր կողմից չեն տեղափոխվում Օրենսդրությանը համապատասխան պարտադիր հայտարարագրման ենթակա ապրանքներ, ապա Դուք կարող եք ընտրել մաքսային հսկողության կանաչ ուղին և ՀՀ սահմանը հատել առանց ապրանքները գրավոր հայտարարագրելու:

Ուշադրություն

Առանց ուղևորային մաքսային հայտարարագիր լրացնելու մաքսային գործառնությունների ելքի գիծը հատելը համարվում է մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքների բացակայության մասին ֆիզիկական անձի կողմից արված հայտարարություն:

7. Հայաստանի Հանրապետություն միանվագ ներմուծվող կամ Հայաստանի Հանրապետությունից միանվագ արտահանվող կանխիկ դրամական միջոցները և (կամ) ճանապարհային չեկերը ե՞րբ են ենթակա հայտարարագրման.

ՀՀ միանվագ ներմուծվող կամ ՀՀ-ից միանվագ արտահանվող կանխիկ դրամական միջոցները և (կամ) ճանապարհային չեկերը ենթակա են հայտարարագրման, եթե դրանց ընդհանուր գումարը ուղևորային մաքսային հայտարարագիրը մաքսային մարմնին ներկայացնելու օրվա դրությամբ գերազանցում է գործող փոխարժեքով 10 հազար ԱՄՆ դոլարին համարժեք գումարը:

Ուշադրություն

Գործող փոխարժեքով 100 հազար ԱՄՆ դոլարին համարժեք գումարը գերազանցող կանխիկ գումար և դրամական գործիքներ ունեցող ֆիզիկական անձը ԵԱՏՄ մաքսային սահմանը հատելիս պետք է ոչ միայն հայտարարագրի գումարը, այլև փաստաթղթեր ներկայացնի, որոնք հաստատում են այդ միջոցների ծագումը: Մասնավորապես, խոսքը հաշվեհամարից դրամական միջոցներ հանելու վերաբերյալ բանկային փաստաթղթի, ինչպես նաև փոխանակման (կոնվերսիոն) գործողությունների, վարկերի ստացման փաստաթղթի մասին է, ինչպես նաև այն փաստաթղթերի, որոնք հաստատում են քաղաքացիական և իրավական գործարքների կատարումը՝ օրինակ, ժառանգություն ստանալն ու նվիրատվությունը:

8. Ցանկության դեպքում, կարող եմ հայտարարագրել այն ապրանքները, որոնք ենթակա չեն պարտադիր հայտարարագրման.

Այո, ցանկության դեպքում՝ ֆիզիկական անձն իրավունք ունի հայտարարագրելու անձնական օգտագործման ապրանքները, որոնք ենթակա չեն պարտադիր հայտարարագրման:

Ուշադրություն

Եթե ֆիզիկական անձը Հայաստանի Հանրապետությունից արտահանում է ապրանքներ՝ ժամանակավոր, ապա կարող է այդ ապրանքների համար լրացնել ուղևորային մաքսային հայտարարագիր և դիմել մաքսային մարմնին ժամանակավոր արտահանվող անձնական օգտագործման ապրանքների նույնականացում իրականացնելու համար, եթե այդ նույնականացումը կարող է նպաստել առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման Միության մաքսային տարածք դրանց հետադարձ ներմուծմանը: Անձնական օգտագործման ապրանքների նույնականացման մասին նշվում է ուղևորային մաքսային հայտարարագրում, որի մեկ օրինակը փոխանցվում է Միության մաքսային տարածքից այդ ապրանքների ժամանակավոր արտահանումն իրականացնող ֆիզիկական անձին:

9. Եթե ես ներմուծում եմ անձնական օգտագործման ապրանքներ չուղեկցվող ուղեբեռով, ապա արդյո՞ք այդ ապրանքները ենթակա են հայտարարագրման.

Չուղեկցվող ուղեբեռով տեղափոխվող ապրանքները ենթակա են պարտադիր հայտարարագրման:

10. Ի՞նչ է պետք անել, եթե Հայաստանի Հանրապետություն ժամանելիս ունեք թե ուղեկցվող և թե չուղեկցվող կամ միայն չուղեկցվող ուղեբեռ:

Եթե ժամանել եք Հայաստանի Հանրապետություն և ունեք չուղեկցող ուղեբեռ (օրինակ՝ Ձեր ուղեկցող ուղեբեռը, որը Ձեր կամքից անկախ պատճառներով չի ժամանել), ապա ՀՀ սահմանը հատելիս՝ ընտրեք *կարմիր ուղին* և լրացրեք ուղևորային մաքսային հայտարարագիր, հակառակ դեպքում մաքսային մարմինները, *Ձեր չուղեկցող ուղեբեռում գտնվող ապրանքները, ստիպված կլինեն դիտարկել, որպես առանց մաքսատուրքերի հարկերի վճարման ՀՀ սահմանով տեղափոխման համար թույլատրելի չափաքանակները գերազանցող* (եթե անգամ Ձեր կողմից ՀՀ սահմանով տեղափոխվող ապրանքները, այդ թվում չուղեկցող ուղեբեռում գտնվող չեն գերազանցում՝ առանց մաքսատուրքերի հարկերի ՀՀ սահմանով տեղափոխման թույլատրելի չափաքանակները), և հակառակը չապացուցելու դեպքում, Դուք ստիպված կլինեք վճարել մաքսատուրքեր և հարկեր՝ Օրենսդրությանը համապատասխան:

Ուշադրություն

ուղեկցվող ուղեբեռը **դա անձնական օգտագործման ապրանքներն են՝ ներառյալ ձեռքի ծանրոցը, որոնք տեղափոխվում են ՀՀ սահմանով ՀՀ տարածք ֆիզիկական անձի փաստացի մուտքի կամ ՀՀ տարածքից նրա մեկնման ժամանակ.**

չուղեկցվող ուղեբեռը **դա ֆիզիկական անձին պատկանող անձնական օգտագործման ապրանքներն են, որոնք ՀՀ սահամնով փաստացի տեղափոխման համար տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերով հաստատվող միջազգային փոխադրման (տրանսպորտային առաքման) պայմանագրով փոխանցվել կամ փոխանցվում են փոխադրողին՝ կապված ՀՀ տարածք այդ ֆիզիկական անձի մուտքի կամ ՀՀ տարածքից նրա մեկնման հետ (օրինակ՝ուշացումով տեղ հասած ուղեբեռը):**

11. Ո՞վքեր կարող են հանդես գալ որպես անձնական օգտագործման ապրանքների հայտարարատուներ.

Որպես անձնական օգտագործման ապրանքների հայտարարատուներ կարող են հանդես գալ 16 տարին լրացած՝ անդամ պետությունների ֆիզիկական անձինք կամ օտարերկրյա ֆիզիկական անձինք՝

1) որոնք ՀՀ սահմանը հատելու պահին ՀՀ սահմանով ուղեկցվող ուղեբեռում տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքների նկատմամբ ունեն տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունք.

2) որոնք ՀՀ սահմանով չուղեկցվող ուղեբեռում տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքները, այդ թվում՝ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները փոխանցել են (փոխանցում են) փոխադրողին.

3) որոնք անձնական օգտագործման ապրանքներն ուղարկողներն են, կամ՝ միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող անձնական օգտագործման ապրանքներն ստացողներն են.

4) որոնց հասցեով կամ որոնց անունից փոխադրողի կողմից առաքվում են անձնական օգտագործման ապրանքները, այդ թվում՝ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները.

5) որոնք սեփականության իրավունք ունեն անձնական օգտագործման այն տրանսպորտային միջոցի նկատմամբ, որի մաքսային հայտարարագրումն իրականացվում է ազատ շրջանառության նպատակով բաց թողնելու համար.

6) որոնք ՀՀ սահմանով ուղևորվում են անձնական օգտագործման այն տրանսպորտային միջոցով, որը տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքով պատկանում է իրենց, եթե այլ բան սահմանված չէ օրենսդրությամբ:

7) որոնք դատարանի որոշմամբ կամ ժառանգության իրավունքով ձեռք են բերել Միության մաքսային տարածքում մաքսային հսկողության տակ գտնվող անձնական օգտագործման տրանսպորտային միջոցը տիրապետելու, օգտագործելու և (կամ) տնօրինելու իրավունք.

8) որոնք Միության մաքսային տարածքում մաքսային հսկողության տակ գտնվող, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող անձնական օգտագործման տրանսպորտային միջոցի նկատմամբ ունեն տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունք.

9) որոնք իրականացնում են ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման այն տրանսպորտային միջոցի արտահանումը Միության մաքսային տարածքից, որն իրենց փոխանցվել է Օրենսգրքով սահմանված դեպքերում.

10) որոնք ուղեկցում են 16 տարին չլրացած ֆիզիկական անձանց (այդ անձանց ծնողներից մեկը, որդեգրողները, խնամակալները կամ հոգաբարձուները, ուղեկցող այլ անձ կամ, ուղեկցող անձանց բացակայության դեպքում, փոխադրողի ներկայացուցիչը, իսկ առանց ծնողների, որդեգրողների, խնամակալների կամ հոգաբարձուների ուղեկցության անչափահաս տարիքի անձանց խմբի կազմակերպված մեկնման (ժամանման) դեպքում՝ այլ անձինք՝ խմբի ղեկավարը կամ փոխադրողի ներկայացուցիչը)՝ 16 տարին չլրացած ֆիզիկական անձանց անձնական օգտագործման ապրանքների համար.

11) որոնք իրականացնում են ՀՀ սահմանով մահացածների մարմիններով (մասունքներով) դագաղների և աճյունով (մոխրով) աճյունասափորների տեղափոխումը:

Ուշադրություն

16 տարին չլրացած ֆիզիկական անձանց անձնական օգտագործման ապրանքների մասին տեղեկությունները նշվում են նշված անձանց ուղեկցվող անձի անձնական օգտագործման ապրանքների մասին տեղեկությունների հետ միասին՝ մեկ ուղևորային մաքսային հայտարարագրի մեջ:

12. Ո՞վ է իրավասու իրականացնել անձնական օգտագործման ապրանքների հայտարարագրումը.

Անձնական օգտագործման ապրանքների մաքսային հայտարարագրումն իրականացվում է հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի կողմից, իսկ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հայտարարատուի անունից կամ հանձնարարականով գործող այլ անձանց կողմից:

- *Հայտարարագրման ենթակա ապրանքները՝ այդ թվում դրամական գործիքները, թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերը չհայտարարագրելը հանգեցնում է վարչական կամ քրեական պատասխանատվության ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:*

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

https://www.facebook.com/petekamutner/

https://www.instagram.com/src_armenia/

https://twitter.com/petekamutner

https://www.src.am/am